ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
27 դեկտեմբերի 1997 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ

Հոդված 17. Մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը

(վերնագիրը փոփ. 17.11.17 ՀՕ-202-Ն)

Մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝

ա) մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի եզրակացությունը (թույլատրող փաստաթուղթը) տալու համար՝ բազային տուրքի հնգապատիկի չափով.

բ) ***(կետն ուժը կորցրել է 06.12.04 ՀՕ-177-Ն)***

գ) ***(կետն ուժը կորցրել է 06.12.04 ՀՕ-177-Ն)***

դ) ***(կետն ուժը կորցրել է 06.12.04 ՀՕ-177-Ն)***

ե) ***(կետն ուժը կորցրել է 06.12.04 ՀՕ-177-Ն)***

զ) մշակութային արժեքներն արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի եզրակացության (թույլատրող փաստաթղթի) կրկնօրինակը տալու համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով:

Սույն հոդվածով սահմանված պետական տուրքի դրույքաչափերը չեն ներառում ծառայությունների կամ գործողությունների կատարման հետ կապված ծախսերը:

(17-րդ հոդվածը լրաց. 28.12.98 ՀՕ-277, փոփ., լրաց. 13.12.00 ՀՕ-123, խմբ., փոփ. 06.12.04 ՀՕ-177-Ն, փոփ.17.11.17 ՀՕ-202-Ն)

Հոդված 17.1 Մշակութային աճուրդների կազմակերպման լիցենզիա **տալու համար պետական տուրքի դրույքաչափը**

1. Մշակութային աճուրդների կազմակերպման լիցենզիա տալու համար գանձվում է պետական տուրք՝ տարեկան **բազային տուրքի 1000-ապատիկի չափով»:**